17.11.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
նոյեմբերի 16-ի N 1799 - Լ որոշման

ԱՐՑԱԽՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի քաղաքացիներին, որոնք ունեն Արցախի հաշվառում: Սոցիալական աջակցությունն Արցախի քաղաքացուն տրամադրվում է նաև այն դեպքում, եթե նա վերադարձել է Արցախ:

2. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է միանվագ դրամական օգնության ձևով՝ յուրաքանչյուր շահառուի համար «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով (այսուհետ՝ նվազագույն աշխատավարձ): Եթե շահառուն Հայաստանի Հանրապետությունում ստանում է կենսաթոշակ կամ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ կամ Արցախում ստանում է կենսաթոշակ, ապա միանվագ դրամական օգնությունը տրամադրվում է նվազագույն աշխատավարձի և շահառուի 2020 թվականի հոկտեմբեր ամսվա կենսաթոշակի կամ ծերության, հաշմանդամության կերակրողին կորցնելու դեպքում նպաստի դրական տարբերության չափով:

3. Արցախի քաղաքացին, որն ունի Արցախի հաշվառում, չի կարող հանդիսանալ սույն միջոցառման շահառու, եթե՝

1) նրա համար Հայաստանի Հանրապետությունում հաշվարկվել է աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ եկամուտ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած որևէ ժամանակահատվածում, կամ նույն ժամանակահատվածում նա Հայաստանի Հանրապետությունում հաշվառված է եղել որպես անհատ ձեռնարկատեր.

2) նրա անվամբ 2020 թվականի հոկտեմբեր ամսվա համար Արցախի պետական կամ համայնքային բյուջեից հաշվարկվել է աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ եկամուտ.

3) նա հանդիսանում է 18-ից (18 տարին լրացել է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը) մինչև 58 (58 տարին լրացել է 2020 թվականի նոյեմբերի 10-ից հետո) տարեկան արական սեռի անձ, բացառությամբ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից:

4. Սույն միջոցառման այն շահառուն, որը չունի սեփականության (այդ թվում՝ բաժնային) իրավունքով Հայաստանի Հանրապետությունում գտնվող անշարժ գույք (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի), տրամադրվում է լրացուցիչ աջակցություն՝ 15,000 դրամի չափով:

5. Սույն միջոցառման շահառու հանդիսացող անչափահաս երեխաներին միանվագ դրամական օգնությունը և լրացուցիչ աջակցությունը տրամադրվում է ծնողին (օրինական ներկայացուցչին), եթե երեխայի ծնողը կամ ծնողներից մեկը հանդիսանում է ծրագրի շահառու:

6. Սույն միջոցառումից օգտվելու համար դիմումը պետք է ներկայացվի էլեկտրոնային եղանակով՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 20-ը:

7. Միանվագ դրամական օգնությունը տրամադրվում է Հայփոստի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ